ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/10

ք. Երևան «17» « հուլիս » 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գրիտիգ» ՍՊ ընկերությանը, ի դեմս տնօրեն՝ Խ.Այվազյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար «Արմավիր» ՔԿՀ-ի շինարարական աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը** (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները կազմում է 365 օրացուցային օր:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __10__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **602640** (վեց հարյուր երկու հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են _17___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
Ք. Երևան, Արշակունյաց-63	Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14
Ն աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011029445	Հ/Հ 1570066216660100
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 04229504
Քր. ծառայության	
Ա. Ղազարյան	Խ. Ավյազյան
------------------ (ստորագրություն)	------------------ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Մատուցման			
					ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
3	71351540/503	**ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի շինարարական աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ**	Տեխնիկական բնութագիրը ներկայացված է ստորև, տես «**Պարտադիր պահանջներ**» բաժինը: Շինարարական աշխատանքների ծավալները, որոնց նկատմամբ պետք է իրականացվեն տեխնիկական հսկողության ծառայություններ, ներկայացված են ստորև՝ **հավելված 1-ում:**	դրամ	602640	1	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Էջմիածին-Չոբանքարա խճուղի թիվ 23.	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ

Պարտադիր պահանջներ

Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ	• Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ընդգրկված լինի Ծառայությունը մատուցողին տրված լիցենզիայի պատասխանատու անձանց ներդիրում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն: • Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին • Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը • Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին • Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի • Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար • Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները

	իրականացնելու համար • Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով • Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը) • Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը • Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր) Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:
<u>Հաշվետվության ներկայացման պահանջներ</u>	• Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ **<u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>**, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: • ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր): ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով) • ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ: • ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում:
<u>Նորմատիվային պահանջներ</u>	Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝ • ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի • Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի • ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման

Հավելված 1

ՀՀ ԱՆ «ԱՐՄԱՎԻՐ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ծավալաթերթ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	Ծավալը
1	2	3	4
	Շինարարական աշխատանքներ		
	Վերանորոգման աշխատանքներ		
	Բակային տարածքի բարեկարգման աշխատանքներ		
1	Բնահողի հարթեցում մեխանիզմով	մ²	265,000
2	Խճի շերտի պատրաստում 8սմ հաստությամբ	մ²	265,000
3	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	մ²	265,000
4	80x200մմ կտրվածքի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով	գմ	160,000
5	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ³	22,400
6	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	26,880
7	Բուսահողի փռում ձեռքով 7սմ հաստությամբ	մ²	224,00
8	Սիզամարգերի տեղադրում	մ²	224,00
9	Թփուտների տնկում /սամշիթ 40սմ/ 95գմ	հատ	237,500
10	Թույա	հատ	10,000
11	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	8,000
12	Աբղամանների տեղադրում ամրացումով	հատ	10,000
13	Մետաղական սեղանի տեղադրում 0,9x3մ	հատ	1,000
	Բետոնե աստիճան, բազրիք		
14	B-15 դասի բետոնից աստիճանների պատրաստում	մ3	26,500
15	50մմ հաստությամբ g/ավազե հարթեցնող շերտ	մ²	11,000
16	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով	մ²	11,600
17	40x3մմ, 50x30x3մմ մետաղական խողովակներից, D18մմ ամրաններից բազրիքների պատրաստում և տեղադրում	տն	0,128
18	40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	26,500
19	50x30x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	10,000
20	Արմանի արժեքը D18մմ 10,7գմ	գմ	0,021

	Աստիճանի հովհար		
21	Անցքերի շաղափում պատերում	հատ	8,000
22	Ուղղանկյուն խողովակներից կարկասի պատրաստում 30x60x3մմ	տն	0,080
23	50x25x3մմ ուղղանկյուն խողովակի արժեքը	գմ	24,600
24	Շերտապողպատ 30x3մմ	գմ	4,800
25	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0,080
26	Հովհարի ծածկույթի պատրաստում պոլիկարբոնատից	մ^2	4,200
	Հովհարածածկ		
27	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ^3	0,120
28	Տանիքածածկույթի տակ մետաղական կարկասի պատրաստում /կանգնակներ, հեխանային մաս/ և տեղադրում մետաղական խողովակներից	տն	0,375
29	80x80x3մմ մետաական խողովակների արժեքը	գմ	52,600
30	40x40x3մմ մետաղական խողովակներից կավառամածի պատրաստում	տն	0,226
31	40x40x3մմ մետաական խողովակների արժեքը	գմ	67,200
32	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0,601
33	Տախտակամածի պատրաստում 600x40մմ	մ2	5,000
34	Ցինկապատ գունավոր պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ ԿՊ-21-0.5մմ	մ^2	39,000
35	Պլաստմասե առաստաղի պատրաստում ցինկապատ պրոֆիլներով	մ^2	40,000
	Պարսպի իրականացում		
36	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-20 դասի բետոնից	մ^3	2,300
37	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0,130
38	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0,025
39	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-20 դասի բետոնից	մ^3	2,200
40	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0,150
41	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0,030
42	Միաձույլ ե/բ գոտու պատրաստում B-20 դասի բետոնից	մ3	1,130

43	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0,050
44	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0,015
45	Պատերի շարվածք կ/ձևի տուֆ քարից 20սմ հաստությամբ 128,2մ2	մ3	25,640
46	Պատերի ց/ավազե սվաղ	մ^2	262,700
47	Պատերի ճակատային ներկում, մածկապատումով	մ^2	262,700
48	40մմ հաստությամբ բազալտե սալերի բազալտե որմնադիր 30,1գմ 30սմ լայնությամբ	մ^2	9,030
49	Ցոկոլի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով, սալերի խարսխումով	մ^2	26,000
50	Փշալար եգոզա	գմ	30,100
51	Փոշեներկված մետաղական դարպասի տեղադրում 4x4,5 2հատ	մ^2	36,000
	Բաթոդյա հանգստի գոտու ճաշարանի և խոհանոցի շին աշխատանքներ		
	Պատեր		
52	Պատի բացվածքի իրականացում 1,4x2,1 /600մմ/	մ^2	2,940
53	Պատի օդափոխության անցքերի իրականացում D100մմ /60սմ/	տեղ	3,000
54	Պատերից հին ներկի մաքրում	մ^2	280,400
55	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	0,249
56	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ^2	96,000
57	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,192
58	Պատերի ց/ավազե սվաղ	մ^2	192,000
59	Պատերի գաջե սվաղ	մ^2	205,300
60	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	205,300
61	Պատերի ճակատային ներկում, մածկապատումով	մ^2	111,600
62	Պատերի երեսպատում հախճասալով	մ^2	44,400
63	Այլումինե լվացարանի տեղադրում 90x90x60սմ	հատ	1,000
64	Օդափոխիչների տեղաադրում D100մմ	հատ	6

	Առաստաղներ		
65	Առաստաղի երեսպատում 9,5մմ հաստությամբ գիպսոկարտոնից ցինկապատ պրոֆիլներով	մ²	93,100
66	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	93,100
	Հատակներ		
67	40մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ²	87,500
68	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ²	93,100
69	Մամլոգրանիտե հատակների պատրաստում	մ²	92,300
70	Մամլոգրանիտե շրիշակների տեղադրում 30,9գմ 10սմ	մ²	3,090
	Դռներ պատուհաններ		
71	Մետակաղան դռան տեղադրում	մ²	3,360
72	Մետակաղան դռան տեղադրում	մ²	3,360
73	Մ/պլաստե դռների տեղադրում	մ²	1,890
74	Մ/պլաստե պատուհանների տեղադրում բացվող հատված	մ²	3,600
	Տանիք		
75	Գոյություն ունեցող հոցհարածածկերի ապամոնտաժում	մ²	60,000
76	Տանիքածածկույթի տակ մետաղական կարկասի պատրաստում /մարդակ, կանգնակ, ծպեղնավոտք/ և տեղադրում մետաղական խողովակներից	տն	0,696
77	80x40x3մմ մետաական խողովակների արժեքը	գմ	132,500
78	40x40x3մմ մետաղական խողովակներից կավառամածի պատրաստում	տն	0,575
79	40x40x3մմ մետաական խողովակների արժեքը	գմ	171,000
80	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	1,270
81	Տախտակամածի պատրաստում 900x40մմ	մ2	8,200
82	Ցինկապատ պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում 0.55մմ հաստությամբ ԿՊ-21-0.55մմ	մ²	110,000
83	Տանիքի ջերմամեկուսացում բամբակի շերտով	մ2	93,100

	Սանհանգույցի իրականացման աշխատանքներ		
84	Պատերից հին ներկի մաքրում	մ²	6,200
85	Անցքերի բացում 30սմ հաստությամբ պատի մեջ պատի մեջ D150մմ	տեղ	1,000
86	Բետոնե ենթաշերտի քանդում	մ³	0,144
87	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	0,288
88	B-15 դասի բետոնից շերտի վերականգնում	մ³	0,144
89	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ²	13,000
90	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,026
91	Պատերի ց/ավազե սվաղ	մ²	26,000
92	Պատերի գաջե սվաղ	մ²	18,000
93	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	18,000
94	Պատերի երեսպատում հախճասալով	մ²	18,000
95	Լվացարանի տեղադրում	հատ	1,000
96	Զուգարանակոնքի տեղադրում	հատ	1,000
	Առաստաղներ		
97	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	3,700
	Հատակներ		
98	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ²	3,200
99	Մամլոգրանիտե հատակների պատրաստում	մ²	3,200
	Դռներ պատուհաններ		
100	Մ/պլաստե դռների տեղադրում	մ²	1,400
	Սանհանգույցներ		
	Քանդման աշխատանքներ		
101	Գաջի սվաղի պատերից	մ²	111,600
102	Հախճասալի քանդում պատերից	մ²	192,600
103	Ասիական թասերի ապամոնտաժում	հատ	20,000
104	Լվացարանի ապամոնտաժում	հատ	20,000
105	Բետոնե թմբի մասնակի քանդում	մ³	3,600
106	Կերամիկ սալերից հատակների քանդում	մ²	41,441
107	Մ/պլաստե դռան ապամոնտաժում	մ²	26,460
108	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	14,041
	Շին վերանորոգման աշխատանքներ		
109	Պատերի ց/ավազե սվաղ	մ²	201,600
110	Պատերի գաջե սվաղ	մ²	113,400
111	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	113,400

112	Պատերի երեսպատում հախճասալով	մ²	201,600
113	B-15 դասի բետոնից բետոնե թմբի պատրաստում	մ³	3,600
114	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ²	46,800
115	Մամլոգրանիտե հատակների պատրաստում	մ²	46,000
116	Ասիական թասերի տեղադրում	հատ	20,000
117	Լվացարանի տեղադրում	հատ	20,000
118	Լվացարանի ծորակ-խառնիչի տեղադրում D15	հատ	20,000
119	Ցնցուղի ծորակ-խառնիչի տեղադրում	հատ	20,000
120	Հոսակի տեղադրում Փ50մմ	հատ	20,000
121	Մ/պլաստե դռների տեղադրում 0,7x2,1մ	մ²	26,460
122	Պլաստմասե առաստաղի պատրաստում ցինկապատ պրոֆիլներով	մ²	44,000
123	LED տեսակի լույս D100մմ	հատ	20,000
124	Օդափոխիչների տեղաադրում D100մմ	հատ	20,000
	Էլեկտրատեխնիկական աշխատանքներ		
1	Արտաքին լուսավորության վահանակի տեղադրում	կ-տ	1,000
2	Ավտոմատ անջատիչ 220Վտ 25Ա	հատ	2
3	Ավտոմատ անջատիչ 220Վտ 25Ա /հերմետիկ պակետային/	հատ	1
4	Ավտոմատ անջատիչ 380Վտ 25Ա	հատ	1
5	Վահանակի տեղադրում դռնակով 18 մոդուլի համար	հատ	1,000
6	Ավտոմատ անջատիչ 380Վտ 25Ա	հատ	1
7	Ավտոմատ անջատիչ 380Վտ 16Ա	հատ	1
8	Ավտոմատ անջատիչ 220Վտ 25Ա	հատ	2
9	Դիֆերենցիան ավտոմատ անջատիչ 220Վտ 25Ա 30mA	հատ	1
10	ВВГнг-LS 5x4մմ2 պղնձե մալուխների անցկացում	գմ	36,000
11	ВВГнг-LS 5x2,5մմ2 պղնձե մալուխների անցկացում	գմ	10,000
12	ВВГнг-LS 3x6մմ2 պղնձե մալուխների անցկացում	գմ	160,000
13	ВВГнг-LS 3x4մմ2 պղնձե մալուխների անցկացում	գմ	15,000
14	ВВГнг-LS 3x2,5մմ2 պղնձե մալուխների անցկացում	գմ	180,000
15	Պոլիվինիլքլորիդե այրմանը չնպաստող էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ Փ25մմ	գմ	206,000
16	Պոլիվինիլքլորիդե այրմանը չնպաստող էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ Փ20մմ	գմ	195,000
17	500մմ պատի մեջ 50x50մմ անցքի բացում	հատ	4,000
18	Անցքերի վերականգնում	հատ	4,000

19	Երկաթակապ	հատ	1000,000
20	Լուսադիոդային լուսատու 40Վտ,ներկառուցված Ձևը քառակուսի(595x595մմ) լուսային հոսքը 3120Լմ, լուսային արդյունավետությունը 80Լմ/Վտ, լույսի ջերմաստիճանը 6500K լուսահաղորդման ինդեքսը 80	հատ	14,000
21	Լուսադիոդային լուսատու 18Վտ,IP54, Ձևը կլոր (Փ210մմ) լուսային հոսքը 1440Լմ լուսային արդյունավետությունը 80Լմ/Վտ լույսի ջերմաստիճանը 6500K լուսահաղորդման ինդեքսը 80	հատ	1,000
22	Լուսադիոդային լուսատու 12Վտ,IP64, Ձևը կլոր (Փ160մմ), լուսային հոսքը 960Լմ լուսային արդյունավետությունը 80Լմ/Վտ լույսի ջերմաստիճանը 6500K լուսահաղորդման ինդեքսը 80 /սանհանգույց/	հատ	1,000
23	Լուսադիոդային լուսարձակ բարձակի վրա 100Վտ,IP64, Ձևը քառակուսի, լուսային հոսքը 8000Լմ լուսային արդյունավետությունը 80Լմ/Վտ լույսի ջերմաստիճանը 6500K լուսահաղորդման ինդեքսը 80	հատ	17,000
24	Անջատիչ, միատակ 220Վ, 6Ա	հատ	4,000
25	Երկբևեռ խրոցակային վարդակ երրորդ հողանցման հպակով,220Վ, 10Ա	հատ	4,000
26	Անջատիչների, խրոցակային վարդակների տեղադրման տուփ	հատ	8,000
27	Ճյուղավորման տուփ	հատ	5,000
28	Ճյուղավորման տուփ IP64,արտաքին լուսավորության համար	հատ	15,000
29	Ակոսների բացում	գմ	60,000
	Ջեռուցում		
1	Պողպատե խողովակներից ջեռուցման մարտկոցների պատրաստում և տեղադրում /ռեգիստոր/	գմ	42,400
2	89x3,5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	36,000
3	25x2,5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	6,400
4	Խցափակիչ 89x5մմ	կգ	14,400
5	Կարճախողովակ /сасок/ 20մմ	հատ	16,000
6	Կարճախողովակ /сасок/ 15մմ	հատ	8,000
7	Մետաղական կոնստրուկցիա ամրացման համար	կգ	28,000
8	Գնդային փականների տեղադրում Փ20մմ /ամերիկանկա/	հատ	16,000
9	Գնդային փականների տեղադրում Փ32մմ /ամերիկանկա/	հատ	2,000
10	Պողպատե խողովակաշարի տեղադրում Փ32x3մմ վրա փորձարկումով	գմ	15,000
11	Պողպատե խողովակաշարի տեղադրում Փ25x3մմ վրա փորձարկումով	գմ	40,000
12	Պողպատե խողովակաշարի տեղադրում Փ20x2,5մմ վրա փորձարկումով	գմ	23,000
13	Խողովակների ջերմամեկուսացում ֆոլգայապատ հանքային բամբակով	մ^2	5,500
14	Ձեռքի օդահան 15մմ	հատ	8,000
15	Պողպատե ձևավոր մասերի տեղադրում	տն	0,005
16	Անցքերի բացում բետոնե պատի մեջ D80մմ	տեղ	1,000
17	Ակոսների բացում 7x5սմ	գմ	6,000

*	Ջրամատակարարում և կոյուղի		
1	Պողպատե խողովակաշարի տեղադրում Փ20x2,5մմ վրա փորձարկումով	գմ	52,500
2	Պողպատե պատյանի տեղադրում Փ20x2,5մմ վրա փորձարկումով	գմ	0,600
3	Միացում գործող ջրագծին D20մմ	տեղ	2,000
4	Գնդային փականների տեղադրում Փ20մմ /ամերիկանկա/	հատ	6,000
5	Անցքերի բացում բետոնե պատի մեջ D50մմ	տեղ	1,000
6	Ակոսների բացում 5x5սմ	գմ	6,000
7	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Փ100մմ /փորձարկումով/	գմ	4,500
8	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Փ50մմ /փորձարկումով/	գմ	11,500
9	Պոլիվինիքլորիդե արմունկ 50մմ 90^0	հատ	3,000
10	Պոլիվինիքլորիդե արմունկ 50մմ 45^0	հատ	1,000
11	Պոլիվինիքլորիդե եռաբաշխիչ 110մմ 45^0	հատ	1,000
12	Պոլիվինիքլորիդե անցում 110-50մմ	հատ	1,000
13	Բետոնե ենթաշերտի քանդում	$մ^3$	0,310
14	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	0,620
15	B-15 դասի բետոնից շերտի վերականգնում	$մ^3$	0,310
16	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	3,800
17	Բահողի ետլիցք ձեռքով	$մ^3$	3,800

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011029445
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության պետ
Ա. Ղազարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
Արարատի մարզ, գ. Ոստան, Թեիլերյան 14
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570066216660100
ՀՎՀՀ 04229504
Խ. Ավյազյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 17 » « հուլիս » 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/10 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
3	71351540/503	**ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի շինարարական աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ**	0	0	480000	602640	602640

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011029445
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության
Ա. Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570066216660100
ՀՎՀՀ 04229504

Խ. Ավագյան ------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 17 » « 07 » 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/10 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2020 թ.
Պայմանագրի համարը՝ *ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/10*
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«17» «07» 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/10 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն